

ՀԱՅՍՏԱՆ

ՊՈՏՏԱՆՈՒՆ ՈՄԵՆՅ՝

Ամեն մէկ օր հայկական կեանքում բացվում է մի նոր մութ անկիւն, ամեն մէկ օր բերում է մի նոր երևոյթ, առաջացնում է մի նոր գրութիւն: Երանի թէ այդ բոլորը, նպատակաւոր լինէր յեղափոխական ճշմարիտ գաղափարի զարգացման: Բայց, զժբաղդաբար, իրապէս ամեն բան այդպէս չէ: Ամենից ստէպ մենք տկանաստես ենք յայտնվում այնպիսի իրողութիւնների, որոնք ընդունակ են միայն գործի ընթացքը դանդաղացնելու, դժուարացնելու և այդ զեռ ոչինչ, այլ ուղղակի նրան շեղելու ճշմարիտ ուղղութիւնից: Ինչ կը լինի այդպիսի մի գրութեան, այդպիսի մի շեղման հետեանքը — չը զիտենք և չարագուշակ մարդարէի գեր կատարել չենք ուզում: Մենք միայն կուտենք այն, որ ներկայումս այդ գրութիւնը կարող է միայն վնաս պատճառել գործին:

Բայց ո՞րն է այդ գրութիւնը, որ այդպիսի սեւածած հօրիզոն է բանում մեր աչքին:

Կա հայ յեղափոխական երիտասարդութեան մի մասի հասկացողութիւնների կատարեալ խառնաշփոթութիւնն է, կատարեալ քաօսն է: Կատարեալ բացակայութիւն գաղափարական և կոյր հետեցողութիւն բուսնական, աւանդական « խոհեմ գործնականութեան » — ահա՛ զլիսաւոր յատկանիւն երիտասարդութեան մի մասի հասկացողութիւնների յեղափոխական գործի նկատմամբ: Հաւատարիմ իրենց հայրերի խոհեմ « գործնականութեան », որ այնքան թանկ նստեց հայութեան, երիտասարդութեան այդ մասն ուզում է իր պաշանջներն աւելի ու աւելի սահմանափակել, չափաւորել, նա ուզում է միայն « խոհեմ գործնականութեան » համեստ շրջանակում: Սահման ուղի, որ կարող է նրան հասցնել այն աստիճան զիջումների, որ միանգամայն հակառակ կը յայտնվէ ժողովրդի ձգտում ներին: Պարզ է, թէ այդ գէպքում նա բոլորովին կը կորցնէ իր ոտքի տակի հողը, որ կարող է հաստա-

տուն լինել միմիայն այն ժամանակ, երբ յենված է ժողովրդի ձգտումների ու պաշանջների վրայ:

Տարօրինակ ու հետաքրքիր ընթացք ունեն այդ աւստիկ յեղափոխականներու « խոհեմ գործնականութեան » ու « խոհեմ քաղաքագիտութեան » մտքի վրայ խելագար, ված՝ այդ « գործ չինողները » պատրաստ են մինչև իսկ մոռանալ այն բոլորը, ինչ որ իրենք սուրբ են անուանում: Ինչ որ իրենք իրենց համոզումն են (օ. օ.) համարում: Այսպէս նրանք ասում են « մենք էլ սօցիալիստներ (ընկերապարական) ենք, մենք համաձայն ենք ձեզ հետ, որ հայութեան հասարակական իղէալը պէտք է սօցիալիզմ լինի, որ մարդկութեան ցուերի ճշմարիտ դարմանը և նրա կատարեալ զարգացման ու առաջադիմութեան միակ ազդիւրը սօցիալիզմն է, որ և այն, բայց (« բայց » խոհեմ քաղաքագէտների, « գործ չինողների »), որ դուրի են ամեն գաղափարականից, աբխազի մէկ քաղաքէն է) բայց, չարանակում են նրանք, եթէ հայերս հիմա բացարձակապէս յայտնենք թէ գործող յեղափոխական մարմինը սուղորված է սօցիալիստական գաղափարներով, այն ժամանակ եւ քաղական, զլիսաւորապէս ուստական, պետութիւնները հայկական չարման աւանդին չեն համարել և ո՛չ միայն կը զրկեն մեզ իրենց աջակցութիւնից, որ անհրաժեշտ է, այլ և գուցէ մեզ հակառակեն իսկ »:

Այսպէս, տեսնում էք, « գործ չինողների և խոհեմ քաղաքագէտների » աստեթեամբ՝ պէտք է ծախել թղթերի մէջ այն ամեն համոզումները, որ նրանց ասելովն անգամ սուրբ են ու մարդկութեան իղէալ և հանգիստ կերպով, ասանց խոհեմ խայթի գնել նրանց գրպանը և կամ աւելի լաւ՝ իրեն աւելորդ ու անպէտք փաւաս չղրտել մէկ անկիւն: Եւ ինչո՞ւ: Պրովհետեւ « խոհեմ գործնականութիւնն » է այդ թելադրում, որովհետեւ յեղափոխութեան նպատակն ու նրա պաշանջները պէտք է չափաւոր, համեստ կերպով անել, որպէս զի եւրօպական տէրութիւններին, մեր այդ հայրիկ ու մայրիկներին, չը բարկացնենք, այլ ընդհակառակն ուղիտես ենք նրանց սիրաշահել: Չէ՞ որ հայրիկ ու մայրիկ-

ների բարկութիւնը կարող է նրանով վերջանալ, որ անհնազանդ ու յանդուգն որդուն ֆալախկաթի մէջ կը կտան հ

Այո՛, յիրաւի, դա մէկ այնպիսի ծանրակշիռ աւարկութիւն է, որի վրայ պէտք է փոքր-ինչ մտածել, — ախր ի՞նչ հաճելի բան անպիտան ֆալախկաթի մէջ կապւած լինել Մանաւանդ սոսկալի է այդ պատիժը "խոհեմ" գործնական" մարդկանց աչքին, որոնք այնքան չեն սիրում իրենց մեծերին կամ հայրիկ-մայրիկներին բարկութիւն պատճառել ճշմարիտ է, որ այդ մեթոդը վաղուց ի վեր ընդունված բուտի նական քաղաքականութեան մեթոդ է, որի այնպիսի ջերմ սկստապաններ միշտ ունեցել ենք և ունենք այժմ էլ հայերիս մէջ: Միթէ՞ մեր հայրերն ամբողջ դարերի ընթացքում միշտ նոյնը չեն ասել ու արել, թէ մի բարկացուր սուլթանին, սիրաշահիր նրան և նա սմին բան, ամեն բան կանէ հայ ժողովրդի դրութիւնը բարելաւելու համար": Օ, չառ, չառ թանկ նստեց հայութեան այդօրինակ գործնական քաղաքակա-

նութիւնը:

Բայց դառնանք մեր խօսքին:

Մեր "խոհեմ" գործնական ու խոհեմ քաղաքագէտ, մարդիկն ասում են, թէ պէտք է չափաւոր, համեստ պահանջներ անել, սր ինչպէս ուստական, նոյնպէս եւ բոսական միւս պետութիւնները մեր շարժման համակրեն և մեզ օգնեն: Եւ այդ աւարկութեան հիման վրայ նրանք ասում են՝ թողնենք սոցիալիզմի մասին խօսելը և նրա զազաւարներին տարածումը, որովհետեւ սոցիալիզմը չառ անախորժ, չառ դառն ու լեզի գեղահատիկ է թվում վերոյիշած, մանաւանդ ռուսական, պետութիւններին:

Այդ կարծիքը պէտք է քննել երկու տեսակէտից՝ գործնական ու թէօրիական և առանց դժուարութեան կը տեսնենք, որ այդ երկու տեսակէտից էլ նա չէ դիմանում կրիտիկայի:

Առաջինը (գործնական տեսակէտը) յենվում է մի տարօրինակ տարածայնութեան վրայ, որ մենք չառ դարմանում ենք, թէ ինչպէս մութ է միացել մեր երկու խոհեմ քաղաքագէտների աչքին: Նրանց համար մութ է միացել այն աչք ծակող ճշմարտութիւնը, թէ եւրոպական տէրութիւնների հակակրօթեան կամ համակրութեան ջերմաշափը դէպի հայկական շարժումը՝ ո՛չ թէ հայոց ու հայ յեղափոխական մարմնի ձգտումներն են, այլ այդ տէրութիւնների արեւելեան շահերն են և միմիայն այդ շահերը: Կարծում էք միթէ, որ եւրոպական պետութիւնները չեն օգնիլ հայերին հէնց

պարզապէս նրա համար, որ յեղափոխական մարմինն իր հեռաւոր նպատակը, իր իդէալը գնում է սոցիալիզմը: Այդ կարծեւոր համար, պէտք է, արդարեւ, եւրոպական տէրութիւններին միանգամայն իրենց շահերին անգիտակ և պարզամիտ համարել: Ինչպիսի էլ լինեն հայոց յեղափոխական ձգտումները, ինչն սոցիալիստական, լինեն նոյնօժտիւստական, լինեն զրանից էլ նեղ ու սահմանափակ, եթէ Եւրոպայի շահերը թելադրեն նրան համակրել կամ օգնել հայերին — նա կը համակրէ, նա կօգնէ: Նա հայկական շարժման վերաբերութեամբ այնպիսի ընթացք ու դիրք կուենայ, որպիսին պահանջում են իր շահերը, կատարել, լապէս անտես առնելով հայոց յեղափոխական ձգտումներին առաւել կամ պակաս ծայրայեղ լինելը: Հայկական շարժման նկատմամբ Եւրոպան կանէ այն, ինչ իր շահերն են թելադրում: Եթէ յայտնի հանգամանքներում Եւրոպան պահանջ զգայ միջամտելու հայկական գործում, հայերին բաւարարութիւն տալու նպատակով — նա այդ կանէ. և այդ բաւարարութեան աստիճանը կը լինի այնքան, որքան ներում են նոյն իրեն Եւրոպայի շահերը: Եւ ընդհակառակն, եթէ Եւրոպայի շահերը պահանջում են խուլ մնալ գէպի հայկական շարժումը, նա կը մնայ խուլ ու մունջ, թէկուզ հայերը նոյն իսկ լոկ 61-րդ յօդուածի իրազօրծումը իրենց շարժման նպատակ ունենան: Եւ արդեօք նոյն այդ շարաքաստիկ յօդուածի անգործադրութիւնն ամբողջ տաան և չորս տարվայ ընթացքում չէ բացատրվում միմիայն նրանով, որ մինչ այժմ Եւրոպան այն յօդուածի գործադրութեան մէջ ո՛չ մի շահ չէ տեսել իրեն և չէ ուզեցել իր արեւմտեան ծանր վիճակը ծանրացնել, նաև արեւելեան նոր տաքնապնեղով:

Դժուր, "գործ չինողներ", խոհեմ գործնականներ, գո՛ւր, խորամիտ քաղաքագէտներ, գուր ասում էք, որ թէև ինքներդ էլ սոցիալիստ էք, բայց թէ սոցիալիզմի մասին խօսելը պէտք է թողնել . . . որովհետեւ դա հաճելի չէ Ռուսաստանին, հաճելի չէ նաև Եւրոպային: Դուք ասում էք, թէ չափաւոր, համեստ պահանջներ պէտք է անել, որ Ռուսաստանը, Եւրոպան կարողանան հայրական գործազթաթեւամբ մեզ օգնել: Այն խորամիտ քաղաքագէտների, բայց ախր Ռուսաստանին նոյնքան հաճելի չէ հայոց ազգային անկախութիւնը, այդ պահանջն էլ նրան չափաւոր չէ թվում: Պետրոս մեծից սկսած մինչև այժմ Ռուսաստանի քաղաքակա-

նութիւնն է եղել տիրապետել թիւրքիցի (թուրքական) թերակղզու և Փոքր-Ասիայի հողերը, որպէս նաև Կ. Պոլիսը: Ռուսաստանը միշտ հաւատարմութեամբ հետեւ է Պետրոս մեծից կտակ մնացած այդ քաղաքա-

կանութեան և եթէ այդ պետութեան հաճոյքին նայելու լինենք, նա կուզէ Հայաստանի կատարեալ տէրը լի ներք թայց ձեռք "գործ շինողներ", որ մի և նոյն ժամանակ ազգասէր էր, ձեռք հաճելի չէ այդ . դուք ուզում էք, որ հայն անկախ լինի Բայց քանի որ այն քան դիւրութեամբ գիտէք չափաւոր լինել և ձեր սուրբ կարծածը, ձեր համոզումը (. ° . ') տեսութեան մեջ գրե լուց անգամ խորշել ու երկնշել, թէ չը լինի հայրիկ . մայրիկին բարկացնէք, արդեօք ձեր տեսակէտից առ լի տրամաբանական չէ՞ր լինիլ եթէ դուք աւելի չափաւորէիք ձեր պահանջը և ո՛չ միայն սօցիալիզմի մասին չը խօսէիք, ո՛չ միայն ազգային անկախութիւն չուզէիք, այլ ուղղակի ձեռք նպատակ գնէիք Սան . Ստեփանօի 16 . րդ յօդուածը, որ յետոյ իր թիւերի կարգը փոխելով դարձաւ 61 : Այդ յօդուածի պահանջները տակ Ռուսաստանն ինքը ստորագրել է, համաձայն լինելով դրա իրաւորման : Այդպիսով Ռուսաստանն առ լի սիրող աչքով կը նայէ հայոց վրայ, քան թէ հիմա եթէ սօցիալիզմի մասին խօսելու էլ չը լինէք, եթէ նոյն իսկ լոկ ազգային անկախութեան մասին ճառէք : Չէ՞ որ ձեռք քաջ յայտնի է, որ Ռուսաստանը հալածում է ամեն ազգային ձգտումներ ու շարժումներ : Եթէ ուղղում էք ձեր տեսակէտից աւելի տրամաբանական ու աւելի գործնական լինել, արդեօք առաւել լաւ չէ՞ բացարձակ պաշտպան հանդիսանայիք լոկ պարզապէս 61 րդ յօդուածի գործադրութեանը, թէ և այդ էլ դեռ պէտք է հարցնել Ռուսաստանից, թէ արդեօք նրան հաճելի է, թէ ոչ

Ահա թէ "խոհեմ գործնականութիւնը" որ աստիճանի կարող է հասցնել և ինչպիսի սխալ ընթացք տալ գործին : Եթէ Ռուսաստանի, Եւրօպայի ցանկութեան համեմատ պէտք է որոշենք հայկական շարժման նպատակն, այն ժամանակ ամենալաւն է ոչինչ գործ չանենք : Եւրօպան այսօր մէկն է ուղում, վաղը մէկ ուրիշը և այդ պարագայում "խոհեմ գործնական" լի ներք ցանկութեամբ մենք կարող ենք հանգել այն կէտին, որ մեր գործունէութիւնն ուղղակի միշտ կը բերէ ժողովրդի շահերին և կամ հաւատար կը լինի զրօր :

Գործնական տեսակէտից նայելով, ուրեմն, աւելորդ ու անհիմն է այն երկիւղը, թէ Եւրօպան կը խորշէ, եթէ հայ յեղափոխական մարմինն իրեն հեռաւոր նպատակ, իրեն իդէալ ունենայ սօցիալիզմը : Բոլոր գործը նրանումն է որ այդ կարծիքի տէրերը համոզված սօցիալիստներ չեն, այդ պատճառով էլ ոչինչ պահանջ չեն զգում ջատագովել այդ վարդապետութիւնը և նրա ըսկզբունքների համեմատ ընտրել գործնական ուղի ու միջոցներ իրենց գործունէութեան համար : Եւ հաղիւ

թէ էտպէս նրանք ըմբռնած լինեն այդ վարդապետութեան իմաստը, որ և պաշտպանելու համար չունեն բաւական քաղաքացիական արիւթիւն : Եւ այդ բոլորի շնորհով նրանք պարագլուխ են խելքի սօփեստութեամբ, թէ դա գործնական չէ, թէ դա հեռաւոր բան է, թէ պէտք չէ խօսել դրա մասին et tuti quanti Եւ խելքի սօփեստութեան զոյնօրինակ գայթակղումն ընդ նրանց բերել զցեղ են տրամաբանութեան այն սահուն ուղիի վրայ, որի մասին մենք խօսեցինք մինչև այժմ :

Հարցը քննենք հիմա թէօրիական տեսակէտից :

"Խոհեմ գործնականները և խորամտ քաղաքագէտները" ասում են թէ չը խօսենք սօցիալիզմի մասին, բացարձակապէս չը յայտնենք նրան իբրև նպատակ : Բայց կարո՞ղ է արդեօք ճշմարիտ սօցիալիստը չը խօսել սօցիալիզմի մասին և չը տարածել իր գաղափարները : Ինչո՞ւ է, ուրեմն, նա սօցիալիստ : Զարդացած մարդը չէ կարող ինքնախաբէլութեամբ պարտաւիել : Ինչեւ անկեղծ և ուղղամիտ նախ և առաջ հէնց իր տալիս — դա զարդացած մարդու ո՛չ միայն պարտականութիւնն է, այլ և նա ուրիշ կերպ չէ կարող լինել : Բայց երբ մենք ասում ենք գարգացած մարդ, գրանուլ արդէն իմանում ենք մի մարդու, որ ունի յայտնի որոշ աշխարհահայեացք, հասկացողութիւններ, համոզումներ : Միանգամ նա ունի որոշ հասկացողութիւններ, նա չէ կարող ներս չը բերել կեանքի մէջ այդ հասկացողութիւնները : Համոզումը պահանջում է գործ : Չը վերածվելով գործի, նա դադարում է համոզում լինել : Մեր "խոհեմ գործնականներն" ասում են պէտք չէ խօսել սօցիալիզմի մասին, որովհետև Եւրօպայի դա հաճելի չէ : Բայց դա համահաւասար կը լինէր նրան, եթէ ասէին, թէ քո հասկացողութիւններդ կեանքի մէջ մի մոցուր, թէ քո համոզմանդ համեմատ մի վարվիր : Դա բաւական չէ : Ասում են, թէ "գործնականութիւնն" է այդ պահանջում : Բայց ախր այդ միտքն իսկապէս նշանակում է՝ հէնց ուղղակի հրաժարվել սեփական աշխարհահայեացքից, որ համապատասխան չէ բուսինական, "խոհեմ գործնականութեան" : Դա նշանակում է՝ չաշխատել սեփական աշխարհահայեացքով ու համոզումներով աղղեցութիւն ունենալ կեանքի և յեղափոխական գործի վրայ : "Խոհեմ քաղաքագէտների և գործ շինողների" համար, յիշաւի, ոչինչ բան է հրաժարվել սեփական աշխարհահայեացքից ու համոզումներից, որպէս և դրանց աղղեցութիւնից կեանքի ու գործի վրայ, միայն թէ իրենք միշտ մնան բուսինական, "խոհեմ գործնականութեան" չըմանակում : Բայց չէ՞ որ նրանք էլ "գործ շինողներ և խոհեմ քաղաքագէտներ" են : Դրանք իրենց գործունէութեան

թեան մէջ չեն գեկադարձուի յայտնի մշակմամբ ու որոշ աշխարհաշայեացքով ու հասկացողութիւններով, այլ ընդհակառակն՝ մէկ ինչ որ բաւական և անտեսականութեամբ ամենին չը փայլայ «գործնականութեան» համար նրանք պատրաստ են ամեն տեսակ կրճատումներ, զիջումներ, հիմնական փոփոխութիւններ անել իրենց այնպիսի համոզումներով անգամ, որ իրենք մինչ այն օրը սուրբ են համարել նրանք չեն ձգտում իրենց աշխարհաշայեացքի համապատասխան գործնական ճանապարհ ու միջոցներ ընտրել, այլ ընդ հակառակն՝ բաւական, «խոհմ. գործնականութեան» համեմատ նրանք փոփոխում են իրենց աշխարհաշայեացքն ու համոզումները: Հետեւի իրենց հասկացողութիւնների խառնաշփոթութեան, նրանք չունեն և չեն կարող ունենալ ո՛չ մի ծրագիր, որ հիմնված լինի որոշ սկզբունքների և որոշ վարդապետութեան վրայ: Մինչդէռ ամեն մի յեղափոխութեան մէջ զաւանջած է յեղափոխականների նպատակայարմար գործունէութեան համար: Մինչդէռ որպէս ամեն երկրների և ամեն ժամանակների յեղափոխականները, հայ յեղափոխականներն էլ նախ և առաջ անհրաժեշտաբար պէտք ունեն այնպիսի մի ծրագրի, որը, լինելով որոշ վարդապետութիւն, նրանց գործունէութիւնը ներկայացնէր ո՛չ թէ մէկ անգոյն, քառակուսի ու անորոշ իրաւանքով, այլ իրեն պատահաբար ամբողջ ժողովրդի շահերի համար, ընդհանուր բաղդաւորութեան համար: Եւ հէնց այդ պատճառով հայ յեղափոխականները չեն կարող մոռանալ սօցիալիզմը, որը միակ կարող է բաղդաւորացնել ընդհանուրին: Եւ միմիայն այդպիսի որոշ ծրագիրը կարող է յեղափոխական գործունէութեան տալ որոշ ու նպատակայարմար ուղղութիւն: Այդ ուղղութիւնն էլ, անխախտ պահելով հանդերձ յեղափոխականների հիմնական համոզումներն ու սկզբունքները, յեղափոխական գործունէութեանը կը տայ համապատասխան գործնականութիւն: Այդ եղանակով և միմիայն այդ եղանակով պէտք է ձգտել գործնական լինել: Եւ այդ գործնականութիւնը երբեք չի ստիպել մինչև արսուէրդի և սեփական համոզումների վրայ թքելու: աստիճանին հասնել և փախկնալ նրանց բացարձակաբար արձանագրելու յեղափոխական գրողների վրայ:

Այսօր մենք ձգտում ու աշխատում ենք յեղափոխական պատրաստական շարժումների և ի վերջոյ ընդհանուր ապստամբութեան միջոցներով յեղափոխութիւն անել՝ նախ և առաջ իրաւորներու մեր մօտակայ նպատակն, այն է, ձեռք բերելու ազգային անկախութիւն և քաղաքական ընդարձակ ազատութիւններ, սոսկաւարական սոսկմանադրութիւն: Բայց զա մեր վերջնական

իդէալը չէ, այլ յոկ այն ստաջին բայլը, այն անհրաժեշտ սանդուխտն է, որ տանում է գէպի իրականացումն մեր՝ Հ Ե Չ Ա Կ ն պ ա տ ա կ ի, մեր իդէալի, որը յայտնվում է սօցիալիզմը:

ԹԻԻՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Շ Յ Ր Ժ Ո Ւ Մ Ր :

(Շարունակութիւն թ. 7-ից և վերջ.)

Կաճի տաճիկ բողոքողներու թիւը, ինչպէս Պոլսոյ, նոյնպէս ևս գաւառաց մէջ, առանց նայելու անթիւ արգելքներուն, ամարցի և բարբարոս հալածանքներուն: Օրինակ Ամասիա փոքրիկ քաղաքի և իւր շրջակայից մէջ առանց թիւը կը հասնի 15.20000 ի. շատ մեծ է ուրիշ քաղաքներու մէջ առանց թիւը: Տաճիկ կառավարութիւնը իր գէմ կը գրգռէ տաճիկ ժողովուրդն ալ, սա նոյնպէս հասկցաւ թէ պէտք ունի միութեան, և տուրքերու տուեն տաճիկն ու հայը մէկտեղ կը գործեն, առանց երբէք խը տրտիւն, միասին իւր կըրայր գէմ կը գնեն: Այս տեսակ միարանութիւն մը ալ պատահեցաւ Տիւրքիի մէջ, երբ որ հայ և տաճիկ ժողովուրդը խառն յարձակեցաւ կառավարութեան վրայ, քիչ մնաց արիւնայեղութիւն լինելը և եթէ չեղաւ պատճառն այն էր, որ կառավարութիւնը թոյլ էր, քաղաքին մէջ զօրք ալ չկար, ուստի և անմիջապէս կատարեց ժողովուրդի պահանջը: Միարանեցան նա հանգիստ տաճիկները հայերուն հետ այս տարի խճուղի ի ի տուրքը շտալու համար: Եւ ինչպէս չը գրգռուի ժողովուրդը, քանի տարիներէ ի վեր կը ապրէ այդ տուրքը, տակայն միեւն օրս արդիւնք մը տեսած չէ, շինուածներն ալ վերելիւմ են և անցուցարձք անկարելի է: Այնպէս խը ձուգիին համար որչա՛ն ժողովուրդ աշխատեցաւ: Կփրաւ տայ կղերքը, ի՞նչ ահապին գումարներ ծախսուեցան, քանի քանի զիւղացիներ կորսուեցան այդ աշխատանքի ժամանակ, իսկ այսօր գնալ քաղի անկարելի է՝ եթէ չես ու գեր զոհուիլ արագընթաց Կփրաւին: Կըսեն թէ տաճիկ ժողովուրդը չը կրնար միարանիլ հայերուն հետ և այս հաստատելու համար կրօնքը պատճառ կը գտնեն: Մեր կարծիքին համեմատ այդ վարդապետութիւնը չափէն աւելի հարեանցի է, որն որ իր ամեն մէկ քայլափոխին մէջ կը ցցունի իր թոյլ կողմերը: Երբ է թէ սոսկ տաճիկ ժողովուրդին համար կրօնքը մեծ նշանակութիւն ունի և շատ արցելքներ կը ստեղծէ թիւրք և հայ ժողովրդեան միարանութեան տաջն: Բայց և այնպէս երբ որ կը տեսնուին կենսական անհրաժեշտ խնդիրներ, անտեսական զանազան կացութիւններ, որչա՛ն ալ կրօնամոլ լըլըյ ժողովուրդը, անմիջապէս կը նեղանայ կրօնքէն և կը հետեի բնական և ժամանակակից պահանջներուն: Բաւական է մեր վերջը նշանակած փաստը՝ Տիւրքիի խռովութիւնը, ուր իմիջի այլոց բանք, տաճիկութիւնը խիստ մեծ

լեռանդ է՝ հաստատուելու մեր ըսածը. իսկ ժողովրդային կեանքի մէջ այդ տեսակ մի փաստ, այդ տեսակ մի երևւոյթ մեծ նշանակութիւն ունի և ապագայի համար մեծաւ մեծ խոստումներս կը իշխու՞ տաճիկ ժողովուրդը չը պիտի միանայ հայոց հետ, երբ կը տեսնէ թէ հայերը կը պահանջեն հանրութեան կենսոց բարեփոխումը, առանց այլ և այլ աղգային խտրութեան:

Այս տեսակէտով Հնչակեան Կուսակցութեան հայրենեաց մատուցած ծառայութիւնը աննման է. մինչև վերջին տարիներս մենք չէինք փորձած տաճիկներու հետ միարանել: Եթէ մեր մէջ այսօր տաճիկներ չկան ապա միակ պատճառը մենք հայերս ենք. մենք իբրև սուլթի յառաջադէմ աղգ, մեր զրացիներու հետ միանալու տեղ, անոնցմէ կը փախչէինք, հետեւելով մեր նախնեաց աւանդութեանց և զանց ընելով այն գաղափարները և յառաջադիմութեան ոգին որք փրկցին մինչև իսկ Չինաստանի պարսպալը: Եթէ մեր նախնեաց ատեն տաճիկները կը խորշէին հայերէն, այդ չը նշանակէր որ անոնք պիտի խորշին և այսօր, վաղը և ամեն ատեն: Գոնէ փորձէինք, հիմա կը փորձենք և կը տեսնեմք, որ շատ մը պարագայներու մէջ միանալ կարելի է և այն ալ լաւ միանալը: Յաւանքս այն է որ ուշ սկսանք և այն ալ այն ժամանակ, երբ մեր ժողովրդեան մէջ ցանուած էր սոսկալի ատելութեան ոգին իր զրացիին նկատմամբ, իսկ այս ատելութիւնը յայտնուելով այսօր մեզ մեծ մեծ մեծանքի տուաւ. տաճիկ ժողովուրդը լսած է թէ հայկական շարժման "նը պատակն է ջարդել տաճիկները" և սակէ ուրիշ բան մը չգիտէ: Մինչև Հնչակի Հայաստանի խորհրդ մտնելը մենք ամենքս այդ նպատակին կը ծառայէինք: Այդ ոգին այնպէս խորունկ արմատներ ձգած էր մեր մէջ, որ երբ առաջին անգամ կարդայինք Հնչակեան Կուսակցութեան Ծրագիրը, շատ ծանր երեւաց մեզի այդ խնդիրը: Սակայն օրէ օր վարժուեցանք, փորձեր ըրինք և այսօր համոզուած ենք՝ թէ այդպիսով միայն պիտի ըլլայ և կրնայ ըլլալ, և որչափ ծանր էր մեզի այսպիսով գործի սկսել առաջին օրը, այնչափ ծանր է մեզի այսօր առանց այն կէտին գործ չարմատիկը:

Եւ վերջապէս կառավարութիւնն ալ կօզնէ մեզի այս տեսակէտով: այսինքն խտրութիւն չը գնելով: Գաւառահան թերթերը լեցուն են յօդուածներով, որոնք անխտրութիւն կը քարոզեն: Միով բանիւ սա ալ մասնաւոր նշանակութիւն ունի: Վերջերս ալ Կարնոյ և Պօլսոյ շարժումներէն վերջը, կառավարութիւնը ստիպեալ օր ըստ օրէ սկսաւ աւելի ծանրանալ տաճիկ ժողովուրդին վրայ, ալ աւելի տուրքերու մասին: Իսկ մի քանի հայերու ըսպանութիւնը, եկեղեցւոյ մէջ տէր Սուրբիստի վրայ արձակուած զննողները և այլն, յայտնի ըրին տաճիկ ժողովրդեան թէ եթէ իրաւ որ հայերը միտք ունին մեզ կոտորելու, հապա այս հայերուն ջարդուիլը ի՞նչ կը նշանակէ, նոյն իսկ քահանայի, և մինչև իսկ եկեղեցւոյ մէջ: Այս բոլոր եղանակները տաճիկներու վրայ ալ տապաւորութիւն կընէ և ինքնին խորհելու նիւթ դարձած է: Իսկ երբ նահանգիս թերթի մէջ Պօլսոյ լրագիրներէն քաղուած Գրիգոր Գըլը

եանի գաղափարը, թէ և աղաւաղուած կերպով, յայտնուեցաւ, որ "մենք հայերս թշնամի չենք բնաւին բնդհանուր տաճիկութեանը, այլ տաճիկ կառավարութեանը և որ մենք իշխանութիւն չենք ուզեր, այլ աւսմկալարական գրութիւն, որ ժողովուրդն ինքնատէր է և տուրք չի տար կամ կը տայ քիչ" և այլն և այլն, այս հայ լրտեսներու հարածութիւնը յեղափոխականաց կողմէ, քիչ թէ շատ տաճիկներու գաղափարը լուսարանեց հայկական շարժման նկատմամբ: Այսօր կը լսուի շատ անգամ տաճիկներուն լուրջ կերպով խօսիլը "ճարպիկ հայի" վրայ, որը կուզէ "այս ֆրանկայ" մի կառավարութիւն ունենալ, առանց սուլթանի, որ կը տիրէ արդարութիւն, ժողովրդային հարստութիւն, օրէնք և այն որ զլսաւորն է, ժողովրդոց տուրքերու թեթեւութիւն, նոյն իսկ չը գոյութիւն:

Որչափ նշանաւոր են այդպիսի խորհրդածութիւններ Կըսեն, թէ վերջապէս տաճիկների հետ այդ եղանակաւ խօսիլ անկարելի է: Իրաւ է, թէ պէտք է զգուշութիւն և սակայն միայն տաճիկներու հետ խօսած ատեն նիս. միթէ չկան հայոց մէջ Վասակներ: Ամեն բան ըսկաւուած ատեն դժուար է, բայց այդ Հնչակեան թէ անկարելի է, այս ասպարէզի մէջ: Վասակներ միշտ եղած են, կան ու կը լինին, սակայն վտանգը նկատելով պէտք է փորձել, վասն զի նախատեղ խիստ մեծ է: Կառավարութեան մէջ մէկ հատ տաճիկ ունենալը, կը նշանակէ ամբողջ գաւառի և մինչև իսկ նահանգի տաճիկները զրաւել սուրբ նպատակի համար: Հնչակեան Կուսակցութիւնը կը հասնի իր այդ նպատակին: Չորհիւ իր սկզբունքներուն ու գործունէութեան, միայն թէ իր վայրագ հաշտմանքով կառավարութիւնն ալ չխնայէր իր օգնութիւնները, իր մեծամեծ օգնութիւնները:

Իսկ երբ տաճիկ ժողովրդի գոնէ մի փոքրիկ մասը միանայ մեզ հետ, այն ատեն մեր փափագները անհամեմատ աւելի գիւրտութեամբ կը պատկաւին: Նոյն իսկ այսօր տաճիկ կառավարութիւնը մի ո՞ր է շարժման ստեղծող աշխույտ տեսակետով ոչինչ է: Իսկ նա օրէ օր կը թուլանայ, տաճիկական կառավարութիւնը ինչ որ երէկ էր, այսօր նոյնը չէ, իսկ ինչ որ այսօր է, վաղը չկրնար ըլլալ և սա ինքնին կը հասկնուի: Երբ հիւանդոտ մարմնի վերքերը չբուժուին, և աւելի՛ երբ որ հիւանդը բժշկին գիմելու տեղ նա չէ՝ թէ միայն բժշկական դարմանները չկատարէր, այլ նոր նոր առողջութեան և բժշկականութեան հակառակ միջոցներու կը դիմէ, այն ատեն հին վերքերը կը տարածուին, տեղի տալով ուրիշ շատ մը վերքերու, որոնք առատ սնունդ կը գտնեն առողջութեան հակառակ կողմ կացութեանց մէջ: Ուրիշ ոչինչ է տաճիկ կառավարութիւնը: Մի ժողովրդի յուզման առաջը առնելու համար, անիկա ուրիշ մը ալ կը գրգռէ իրեն դէմ. հայերու կացութիւնը բարեփոխելու տեղ, նա կոշտացնէ տաճիկ ժողովրդեան առանձնաշնորհումն ալ, իբր թէ հաւասարութիւն ընելու համար: Տուրքերը պակսեցնելու տեղ, նա կը շատցնէ և պիտի շատցնէ, քանի որ այդպէս կը պահանջէ իր, այսօրուայ շահերը և քաղաքականութիւնը. ստարի մը առաջ նա հիւպատոսներ, լրագիրներ կա

չափաբար պէտքը չունենք, իսկ այսօր նա կը կարծէ թէ այդ անհրաժեշտ է, կը կարծէ թէ հայը կամ իր բոլոր հը պատուները կուզեն ուրիշ ձեռքով ստանալ իրենց ազատութիւնը, կրկինը խաղաղ պահելու համար, նա կը փոխէ Մուստաֆան Ալին հետ, կարծես թէ Ալին կա. խուժ ունի ամեն բան և ազով երկիրը աւելի մասնուած է անխառնութեան, որովհետեւ Մուստաֆան երէկ կը խօսէր մէկ ուրիշ լեզուով, Ալին այսօր կը խօսի մի տարբեր լեզուով, իսկ վաղը մի օր և է Ալի - Խըտրօղլի կը խօսի միանգամայն տարբեր կերպով: Իսկ ի՞նչ է առնեց փոխուելուն պատճառը. գլխատառէս այն է, որ վալին իր ժամանակին թուշի չէ ստացած և նա ստակի կարօտութիւն ունի: Քննութեան տեղը աճուրդը կը բռնէ, իսկ կրթական աստիճանի տեղը այս ինչ կամ այն ինչ գուժարը, իսկ որ տեղերէ առնուած են այդ գումարները. յայտնի է թէ մողովրդէն Ահաւասիկ քեզի բարեկարգութիւններ, ահա քեզի համար բեւեռելու նոր միջոտ:

1891, Խարբերդ .

Արեւելի .

ՎԱՐԴԱՆ ԳԱՆՈՒՍՏԵԱՆ .

(Կ ե ն ս ա գ ր ա կ ա ն տ ե գ ե կ ու թ իւ ն ն եր .)

Վարդան միջին հասակով, ոչ նիհար և ոչ լեցուն, սև մազերով ու յոնքերով, աղուամազ պիտերով առաջ և մաղձային կազմուածքով 23 տարեկան երիտասարդ մ' էր: Մանուկ հասակին մէջ ծնողազուրկ մնալով՝ մեծցաւ կըն ջաւոր քրոջ խնամատարութեամբ և մօրաքրոջ հոգածութեամբ: Նա երբ եղաւ եօթ ութ տարեկան, խեղճ ու թշուառ որբ վիճակի մէջ սկսաւ յաճախել Վանի ս . Յա. կորե եկեղեցւոյ թաղային վարժարանը՝ ուր մինչև չորս տարի ուսաւ այնչափ օրչափ ներքեցին իւր վիճակ ու կացութիւն:

Որբ վիճակի մէջ չի կարողացաւ երկար ժամանակ չարունակել ուսումը, ուստի վարժարանէն ելնելով՝ մտաւ մանխաղճործութեան գործարանին մէջ, ուր եռանդով աշխատեցաւ և որով պարտաւեցաւ մինչև տասը տարի Արհեստին մէջ ցոյց տուաւ բաւական յաջողութիւն, բայց ինչպէս Տաճկաստանի հայ արհեստաւորք, մէկ կողմանէ չի կարենալով մրցիլ եւրօպական մեքենայագործ արդիւնարեութեան գէժ՝ ենթակայ են միշտ տնտեսական քայքայման և միւս կողմանէ աղքատ ու թշուառ վիճակի մէջ կառավարական ծանր ու զանազան տրոյ անտանելիութենէն ստիպեալ՝ ցրուած են աշխարհիս այլ և այլ կողմերը, նոյնպէս Վարդան չի կարենալով բաւականաճալ իւր արհեստով, ինքը գինք ձգեց պանդխտութեան կործանիչ հասանքին մէջ և իւր օրագահիկը հայթայթելու համար գիմեց Պոլիս՝ որ լիքն է քանդուած ծծախներու միակ նեցուկներով:

Վարդան Պոլսոյ մէջ բարեբաղդաբար ընկերական լաւ չըմանակի մը մէջ զանուեցաւ՝ ուր շատ ու շատ աւելի

բան սովորեցաւ, քան վաղժարանին մէջ: Նա ի Պոլիս սըրճագործութեամբ կրթաղէր և կը բնակէր Ապուտ էֆէն տի խանին մէջ, մօտ Ճիհանկիւլեանի խանութին՝ ուր նա առիթ ունէր շատ անգամներ տեսնուելու այդ հերոսին հետ: Այս երկու ազնիւ հայրենակիցներ միմեանց լեզու աւելի լաւ կը հասկնային իրենց պարզ ու լաւնական ոճով, իրենց անկեղծ ու սրտաբաց յարարերութեամբ, քան շատեր որք մեծահնչիւն խօսքեր կը տեղացնեն ամեն նուն գլխուն, մինչդեռ իրենց սրտին մէջ անկեղծութիւն և իրենց մտքին մէջ գործի հասկացողութիւն չի կայ:

Նա աշխատասէր էր, կախատէր թէ անձնական և թէ ընդհանրական գործով, վերջերս աւելի ընդհանրական քան անհատական Վարդան կը գործէր լրիկ ու մեջիկ, այնպէս որ զինքը մօտէն չի ճաչցողները երբէր չէին կարող հաւատալ թէ այդ խեղճուկ երեցող վանեցին կը հրէր իւր մէջ այնչափ վեհ ու զգայուն սիրտ մը և կը կատարէր կարևոր գեր մը, առանց գիտնալու և վայրկեան մը իսկ մտքն անցնելու թէ օր մը պատկերով պիտի վարձատրուէր: Նա մասնակցելով անցեալ տարւոյ յուլիս 15 ի պատմական Յոյցին, կը վշտակցէր նաև այդ առթիւ ընդ նուած ու բանտարկուած իւր սրտակցաց, շարունակ կայցելէր բանտը և կը մխիթարէր զանոնք, տանելով ա, նոնց ուղածներն, կատարելով անոնց յանձնարարութիւններն:

Հետաքրքիր էր գիտնալու ընդհանրական գործերը, նա կը կարգար և կը կարգացնէր շարժման վերաբերեալ յի գափօխական գրքեր ու գրուածներ, հասկացած էր թէ ս . գործին արգելքները վերցունելու արդարութիւն է, և այդ պատճառաւ փախաբող էր որ չարերը իրենց արգար պատիժը գանեն, ուստի գիւրտութիւն կընծայէր արդարութիւնը գործադրող զինուորներուն:

Մատնիչ տէր Սուքիասի տէրօր Յակօբէն բռնի կերպով քաղուած խոստովանութեանը վրայ, անցեալ տարի սեպտ . 17 ի գիշերը օստիկանութեան կողմանէ կը ձերբակալուի և իւր սենեակը կը խուզարկուի՝ ուր կը գտնուի ի միջի այլոց Գում . Գափուի Յոյցի նշանաւոր կարմիր Յայ տարարութիւնը: Վարդանի հարցաքննութեան ժամանակ ցոյց տուած համարձակախօսութիւնը ու օրինակի խորհրդապահուէթիւնը դարձանցոյցին և իրանգամայն կատարեցոյցին անմեղներու դահիճները՝ որք անտանելի չարչարանքներ իգործ գրին իւր վրայ, որպէս զի խոստովանելով ցոյց տայ իւր ընկերները և խօսի իւր գիտցածները, բայց նա հակառակ ամեն չարչարանաց անգրգուելի մնաց մինչև վերջը: Աստիկանապետն անանելով որ ամեն սպառնալիք, սոսկալի տանջանք, խոստմունք և այլք ապարդիւն կը մնան, առտակ ևս կը կատարէր և սատարիկ ձեռնի տալէ վերջ կը հրամայէր զնոսան գնել (Չնտան բտածը, գետ, նին տակ անձուկ, մութ ու խոնաւ խոտը մը է որ ունի իւր տեսակները փոքր ինչ տարբերութեամբ, ոմանք հաղի մի մարդ կը պարունակեն՝ որոց վրայէն ջուր կը կաթկթի, յատակը ցերտօտ առանց խտրի, պատերը թաց ու խոնաւ, առնոց մէջ բանտարկեալն պատին կըրթնելով պիտի ննջէ, նիթէ երբէր կարենայ, ոմանք ալ եր

կու կամ աւելի մարդ կրնան բովանդակել, որոյ յատուկը ծածկուած է խտրի կտորով մը որ կը ծառայէ մի միայն նստող բանտարկեալին վրան չի ցխտուելու)։ Ոստիկանապետին պատուէրին համեմատ վարդապետը փէց օր անօթի ծարաւ կը թողուն ամենագէշ զննանին մէջ, ա մեն գիշեր ձեռքով հարցաքննութեան կը հանեն ոտի կանապետին յատուկ Մէկ կողմանէ քաղցը, միւս կողմանէ խնամութիւնն ու ցուրտը, ձեռն ու տանձանքը, այնչափ ակարացուցած են զինքը, որ քաղցը կարողութիւն չէ ունեցած։ Այսպիսի վիճակին մէջ գիշեր մը երբ կրկին հարցաքննութեան կը հանեն, ոստիկանապետը 13 հատ լուսանկարներ ցուցնելով կը հարցունէ՝ «Վարդապետ, իհարկ է զու գիտես ասոնք, պէտք է ըսես թէ ո՞ր են և ի՞նչ կընեն, եթէ չըսես զքեզ աւելի տանջանայ կենթարկեմ»։ Բայց արիւնքաւոր վարդապետը հիմաւի խորհրդաւորութեամբ կը պատասխանէ՝ «Ես ասոնց և ոչ մին կը ճանչնամ»։ Իսկ այս բացատրական պատասխանին վրայ Արապ փոխ գովաւէր մը ետեւէն յանկարծ այնպէս մը կը զարնէ որ խեղճ երիտասարդը կիշնայ ոստիկանապետին ոտից տակ և կըսկոյր բերնէն արիւն հոսել։ այդ վիճակին մէջ քաղցութեամբ կը տանին կրկին զննան։ Ուրիշ գիշեր մը ալ երբ նորէն հարցաքննութեան կը տանին, ոստիկանապետը 150 օսմա, ոսկի պարգեւով վարդապետը առջեւ կըսէ, «զու ճիշտեմբար ընկերները կը ճանաչես, եթէ ըսես, այս ոսկինքը քեզի տալէս վերջ ապառ կարծուիմ և եթէ կը վախնաս որ զուրս եղնելէ յետոյ քո ընկերներդ քեզ կը դարնեն, որովհետեւ գիտեմ թէ երբ զամբըսմ էր թէ ո՞վ որ մատնութիւն ընէ անիկայ պիտի զարնէր, ատոր համար մի վախնար, ես քեզի ուզած քաղաքի կը զրկեմ ամենական 5. 6 ոսկի պաշտօնով մը։ ապա թէ ոչ, քեզի ալ աւելի տանջանքներ պիտի տամ»։ Վարդապետը անվախ կերպով կը պատասխանէ՝ «անիրաւ տեղը զիս կը տանջէր և եթէ մինչեւ իսկ կախաղան ալ հանելու լինիր, նորէն չէր կրնար ինձմէ որ և է յուր մը ամենը, ահա իմ վերջնական պատասխանս»։ Այս պատասխանին վրայ աւելի զայրացած կը հրամայէ որ քսան օր ևս ուրիշ զննանին մը մէջ նետեն և օրական մէկ հատ թ ա յ ի ն ի ս ե հայ (հարիւր հիսուն, երկու հարիւր տրամ) և մէկ դաւաթ ալ ջուր տան։ Երկրորդ զննանին մէջ ուր նոյնպէս պարսիկ մը ալ բանտարկուած էր, որոշեալ քսան օրերը չի լրացած արդէն սաստիկ կերպով հիւանդացած ու բանտի հիւանդանոց փոխադրուած էր, ուր անգուր թուրք բժիշկներն ու լիւր հիւանդապահներն, իրր թէ բժշկական գործողութիւն կը կատարեն և դարման կը տանին, աւելի մահը կը փութացնեն, աւելացնելով պակաս մնացած շարժարարները։ Յիշեալ հիւանդանոցի բժիշկներէն մի յոյն բժիշկի թոյլտուութեամբ, վարդապետը եղբայրները բժիշկ մը կը տանին իրենց եղբոր վիճակին խնամելու, սակայն հիւանդանոցի պաշտօնեայնէրը տեսնելով որ զուրսէն բժիշկ ու զեղ կը բերեն, կը վաճառեն բժիշկին, ըսելով «զու ալ հայոց գործին կը խանութիս»։ Վերջապէս այնպէս վարդապետը մեռաւ, (աւելի ճիշդ է, եթէ ըսենք մեռացին) բան

տի հիւանդանոցին մէջ մայիս 8 - 20 ին, թողնելով իւր ազնիւ յիշատակը բոլոր ընկերաց սրտին մէջ։

Կ. Պօլիս, 1891 յունիս 1.

Ա. Բ. Ֆ.

ՆԱԲԱԿՆԵՐ ԹԻԻՐԵԻԱՅԻՑ.

Կ. Պօլիս, 4 յունիս 1891.

Բաւական ժամանակէ իվեր տեղի ունեցած և զրեթէ գաղտնի մնացած հետեւեալ գէպը վերջերս երեսն էլամ ու իմացուած է։ Զատեական տօնին օրը առաւօտեան Աւերսան անուն մի ակնցի երիտասարդ եկեղեցի կերթայ։ ինչպէս կերեի այդ անձ իւր համարձակ բնուրութեամբ յայտնի է եղած, մանաւանդ անիրաւ արարմանց զէմ անվախ խօսելու յատկութեամբ։ Իւր բարեկամներէն մին լու ճանաչելով իւր բնաւորութիւնը, կողգուցնէ զայն և կը պատուիրէ որ և է ձայն կամ անխտհեմ խօսք չընել։ սակայն նա նոյն իսկ այդ պատուէրի վրայ մի անարդական խօսք կուզէ գէպի ոստիկանութիւնը և կըսէ՝ «Ի՞նչ կարող են ընել այդ անպիտան...»։ Այդ պահուն ձայնեալ լրտեսներէն մին լսելով այդ հայտնութիւնը ոստիկանութեան կիմացունէ և Աւերսան ձերբակալուելով կը տարուի պահականոց, ուր երբ կը հարցուի իրեն՝ կուրանայ, սակայն կատաւարութիւնը, թէ և տանց վկայութեան, զայն բանտ կը նետէ։ Երբ օր վերջ հայրը բանտ կը գիմէ որդւոյն՝ վըրայօր տեղեկութիւն ստանալու նպատակաւ և զարմանք կիմանայ որ իր որդին Պօլսոյ մէջ իբրեւ վկայութեամբ մարդ, արդէն կատաւարչական կարգադրութեամբ աքսորուած է իւր հայրենիք։ Թէ այս և թէ ուրիշ ամեն պարագայի մէջ, կատաւարութեան բոլոր քանքը այն և զամ է որ միշտ և միշտ խեղդուի ամեն ճիւղ, ձայն և շարժում։

Կիրակի գիշեր լոյս երկուշաբթի պատրիարքական դըրան վրայ փակցուած գտնուեցաւ թուրք մը, որի մէջ ժողովրդեան հրաւեր կը կարգացուէր շարժելու և զործելու։ Այդ պատճառաւ ձերբակալուած ու բանտարկուած է վանցի աշի Կարապետը, որ կամրատանտի բըր հեղինակ այդ արարքին։ Նոյն պատճառաւ կրկին ձերբակալուած են տասը հոգի ևս, սակայն ասոնցմէ երկուքը անշափահաւ ըլլալուն արձակուած են, իսկ մնացեալներն բանտարկուած կը մնան։

Կատաւարութիւնը վարդապետի յուզարկաւորութեան հանգէտին վրայ զարմացած ու բարկացած է, այդ բան իրեն զէմ ցոյց համարելով։ պատրիարքարանի գործակա տար Յրէնկեան Արաւհամ էֆէնտին կը կանչէ և բացատրութիւն կը պահանջէ։ Հարցուցած է, թէ «պատրիարքը մատուցէր այդ կարգադրութեանը մէջ թէ ո՞վ էր և ի՞նչ պատակարգի մարդ էր այդ վարդապետը որուն համար այդքան չուր և բազմութիւն կը լինի, մինչեւ իսկ եպիսկոպոս կերթայ»։ Յիշեալ գերակատար էֆէնտին, կատաւարութեան խնկարկու ծառան, կը պատասխանէ՝ «մեր եկեղեցոյ առաջ հարուստ, աղքատ, հաւատար կը

նկատուին և ամեն արարողութիւնը կը կատարուին Եպիսկոպոսը մինչև իսկ կաթողիկոսը, պարտաւոր է զրոյնս, եթէ մեռնալին տէրը զրամ վճարելով հրաւիրէ:

Աւերիկեան Տրիպոլիս քաղաքները տանող շոգենաւը երբ Չմիւռնիոյ առջև կեցեր է, մէկի մը մօտենալով ու ըլլալին կը հարցունէ, այդ պատճառաւ անմիջապէս կը ձերբակալուի ու կը բանտարկուի:

Տեղւոյս լրագիրները այս օրերս իյայտ կը բերին թուրք կառավարութեան տկարութեան մէկ ուրիշ ապացոյցը, որ է Եւրօպական կառավարին Պօլսոյ և Չէնկէէլ քէյի մէջ տեղ, Անատոսի անուն յոյն մը հրամանատարութեան ներքե կազմուած հրոսակախմբի մը կողմնէ կը բաժնարարուի մը աւաղակները կառավարուող գծէն դուրս հանելով: Հինգ զերմանացի ուղեւորները իս. ուր տարեր են, այն պայմանով որ եթէ 230000 ֆըրանկ փրկանք չը գրկուի և եթէ փոխանակ ստակի զինուորական յարձակում լինի իրենց վրայ նոյն իսկ մէկ զինուորով, անխնայ կը մօրթեն: Գերմանացի կառավարութիւնը իմանալով եղբու թիւը, անմիջապէս հետադարձ հրաման կընէ իւր Պօլսոյ զեականին վճարել վերոյիշեալ փրկանքի ամբողջ գումարն և ազատել ճամբորդները, ապա ի. զրնէն պահանջել նոյն գումարը: Այս դէպք անախորժ տարաւորութիւն թողուցած է սուլթանի վրայ, քանի որ ցոյց կուտայ իւր երկրին խիստ անկարգութիւնը:

Ա. Պօլսոյ մէջ երկու երեք ամիսէ ի վեր անանկութիւնք տակնօրեայ են. հրապարակի վրայ մեծ անստուգութիւն և անպատահութիւն կը տիրէ. որ մէկը պատմել այն շարիքներէն, որք թուրք կառավարութեան անխոհեմ ու անարանդ ընթացքէն յառաջ եկած են և կուգան հետ դէնտէ:

Դիտակ.

Ա. Պօլսոյ, 6 յունիս 1891.

Պօլսոյ հայ երիտասարդութիւնը ընդհանուր առմամբ մի տիպի երեւոյթ կը ներկայացնէ մեր աշաց առջև: Յաւ խօրտ այդ երիտասարդաց կեանքի տգեղ պատկեր ներէն մին ի վեր հանելու տիպի հարկին մէջ կը գտնուի մը: Այսօր ամեն հայ զիտէ և քիչ շատ կարգացած ու լաւ է, որ Հայաստանի և այլ գաւառացի մէջ որչա՞նի մայրեր ու բոյրեր տրին արցունք կը թափեն, ոչ մի օր և մի ժամ խաղաղութիւն ու հանգիստ չունին, որչա՞նի երիտասարդներ բանտերու մէջ կը տառապին և որչա՞նի քաղաք ետներ կը հեծնու Ալիսոս, որ Պօլսոյ երիտասարդութեան մեծամասնութիւնը զիտնալով այս ամենը և կեն. դանի օրինակներ տեսնելով նոյն իսկ իւր աչքովը, փոխանակ դարման ու միջոցներ խորհելու այդ անտանելի կացութեան, փոխանակ իրենց նուիրական պարտականութիւնն ճանձնալու, փոխանակ սրբելու անոնց արցունքները, փոխանակ օգնութեան ձեռք կարկառելու անոնց, բոլորովին անտարբեր զիրք մը կը բռնէ, զլանալով իւր աջակցութիւնը: Կը վախնայ որ մի գուցէ բռնաւորին կողմնէ, հալածուի, բանտարկուի և քաղաքի և այս կերպով կեանքէն ու անոր վայրկեանական հաճոյքէն զրկը:

Իս. Այդ երիտասարդները՝ որք միշտ զգոյշ են իրենց կեանքի համար, ամեն օր մեր աշաց առջև գունդագունդ կը դիմեն մարտիկան անգունդին մէջ՝ ուր տիպիս, այս նորաթիթի ծաղիկներ, հեշտամորութեան թունաւորիչ խորշակէն զարնուած՝ վաղընդիպթ կը թառամին և գերեզմանի ցուրտ կախարիչը, շուտով կուգայ ծածկելու զիրենք սե հողին տակ, առանց օգտակարութիւն մ'ըն. ծաղիկու հայրենեաց և մարդկութեան. բայց թէ մեզ համար թէ՛ ֆիզիքայէս և թէ՛ բարոյապէս արդէն մեռած են այն ամենը, երբ կը տեսնենք թէ վարակուած են այդ մարտեան անտուգ: Ուրեմն ի՞նչ կարելի է սպասել մեռածներէն. ոչինչ:

Եթէ կան այսօր սրտեր, որք անկեղծօրէն կը բարախին հայ ժողովրդեան բաղդին համար, եթէ կան մտքեր, որք զիւր ցորեկ կը խորհին հայ ժողովրդեան ճակատագրին վրայ, եթէ կան մարդիկ, որք անձնուէր եռանդով կու գեն այսօր գործել ամենայն բանութեան դէմ, կը ձգտեն դարման գտնել հայութեան ցուրտին, — ազոնք հայ պարզ, աշխատաւոր կարգերուն մէջն են, անոնցմէ, այդ բազմաթիւ անյայտներէն են յառաջացած մինչև այժմ և կը շարունակեն նոյնութեամբ: Անոնք անկեղծ են, ինքնա վրտահ են, յանդուգն են, ազնիւ են և անոնք են ս. գործին բուն զինուորք, վասն զի անոնք աւելի քան որ և է մէկը կը զգան թշուառութիւնը և կուզեն ազատուիլ ծանր վիճակէն՝ յանուն իրենց և հայրենեաց շահերուն:

Վարդգէս.

Կուսակցութեանս Վանճարանում շնորհակալութեամբ ստացվել են հետևեալ գումարները. —

Եգիպտոսի Ա. քաղաքից 3. Պ. — Ից 23 ֆրանկ, Գ. քաղաքից Տ. Սուրից 10 ֆր. . Ռումանիաի Քս. ք. — Ից Կուսակցութեանս Մասնաճիւղից 75 ֆր. . Թշ. ք. — Ից Կուսակցութեանս Մասնաճիւղից 10 ֆր. . Պապ. ք. — Ից Կուսակցութեանս Մասնաճիւղից 140 ֆր. . Գ. ք. — Ից Ս. Վ. Տ. — Ից 10 ֆր. . Պուգ. ք. — Ից Ս. Յ. — Ից 3 ֆր. . Պր. ք. — Ից Թ. Կ. — Ից 5 ֆր. . Ան. — Ից հինգ ֆր. . Տ. Ահ. — Ից 4 ֆր. . հիսուն տանտ. . Շ. Յ. — Ից 2 ֆր. . Ռուսաստանի Բ. ք. — Ից Հայկազն Զինակրի միջոցով Նոր — Արցախից 13 րուբլ., Բաժակից 10 րբ. և Հարկանից հինգ րբ. . X. ք. — Ից Incognito Ի միջոցով 1775 ֆրանկ, 15 տանտի:

Ա. Զ. Գ. խնդրում ենք Հ. Ն. Հ. Կ. Ի ընթերցողներէրց ուշադրութիւն դարձնել այն կէտի վրայ, որ խմբագրութեանս հասցէն այսուհետեւ Պարիզ Է և ոչ Մոսկովէն, ինչպէս էր մինչև այժմ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետևեալ հասցէով.
Paris (France). — M. Beniard. Poste restante.

Լօնդօն. Հայկական ազատ տպարան.